

Քաղաքականության ամփոփագիր

ՀԱՅԱՍՏԱՆ. Աշխատուժի միջազգային շարժունակության ավելի լավ ըմբռնումը

Մադալենա Օնորատի, Ֆլորենտին
Կերշբաումեր և Սունիվա Յի

Հունիս 2019

Հիմնական ուղերձներ

- Աշխատուժի միգրացիան
հնարավորություններ է ընձեռում
գործազուրկներին, հատկապես՝
գյուղական վայրերի, և հավանական է,
որ շարունակվի, քանի որ
աշխատավարձի ակնկալվող
տարբերությունը մեկնման երկրներում
և Հայաստանում երիտասարդներին
շահագրգռում է արտագաղթել:

- Միգրանտ ունեցող տնային
տնտեսությունների անդամների
գրադված լինելն ավելի հավանական է,
քան միգրանտ չունեցող տնային
տնտեսություններինը, քանի որ
միգրանտ ունեցող տնային
տնտեսությունների գործազուրկները
մեկնում են արտերկիր աշխատելու և
որոշ չափով միգրացիայի շնորհիվ
ստացվող դրամական փոխանցումները
թեթևացնում են ապագա ներդրումների

վարկավորման
սահմանափակումները:

- Աշխատողներն
արտասահմանում աշխատանք են
գտնում հիմնականում սիյուռքի և
ընտանեկան ցանցերի միջոցով, ինչը ոչ
միայն սահմանափակում է նրանց
կողմից ուղղությունների ընտրությունը
(հատկապես հոգուտ Ռուսաստանի),
այլև կարող է միգրացիոն ծախսեր
առաջացնել հմտությունների
անհամապատասխանության և
հմտությունների կորստի հետևանքով,
որոնք դժվարացնում են
վերադարձողների բարեհաջող
վերաինտեգրումը հայաստանյան
հասարակությունում:

- Աշխատուժի միջազգային
շարժունակությանն առնչվող ծախսերի
և օգուտների համակցությունից
հետևում է, որ ՀՀ կառավարությունը
կարող է ավելի մեծ դեր կատարել
մեկնման երկրների հետ
գործընկերությունների ամրապնդման
հարցում՝ արտասահմանում եղած
աշխատատեղերի մասին
տեղեկություններն ավելի հասանելի
դարձնելու և աշխատանքի համար
անհրաժեշտ հմտությունների
զարգացումը կատարելագործելու
համար:

1. Միգրացիա և զարգացում

Տարիների ընթացքում Հայաստանում
գրանցվել է մարդկանց զանգվածային
արտահոսք՝ կազմելով 951 000
(արտագաղթած հայերի ընդհանուր թվի

մեծությունը 2017 թ.): 2017 թ., ըստ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) միգրացիայի տվյալների, արտագաղթողները կազմել են Հայաստանի բնակչության մոտ 32 տոկոսը: Այս ցուցանիշը զարմանալիորեն բարձր է համաշխարհային միջին ցուցանիշից. 2017 թ. արտագաղթողները կազմել են աշխարհի բնակչության գրեթե 3.4 տոկոսը (ՄԱԿ):

Հայաստանից արտագաղթածների կեսը բնակվում է Ռուսաստանում (2017 թ. դրությամբ, ՄԱԿ-ի տվյալներով): Մյուս հիմնական ուղղությունների թվում են Միացյալ Նահանգները և Ուկրաինան: (1-ին հավելվածը ցույց է տալիս Հայաստանից արտագաղթածների բաշխվածությունն աշխարհում:) Վերջին տարիներին ավելացել է արտագաղթը դեպի Արևմտյան և Հարավային Եվրոպա ու Միացյալ Նահանգներ և նվազել դեպի նախկին Խորհրդային Միության երկրներ:

Վերջերս գրանցված միգրացիան, ի տարբերություն 1990-ականներին տեղի ունեցած մշտական արտագաղթի, հիմնականում աշխատուժի ժամանակավոր միգրացիա է: Աշխատողներն արտասահման են մեկնում աշխատանքի համար և իրենց աշխատանքն ավարտելուց հետո վերադառնում են: Բազմաթիվ հարցումները վկայում են, որ աշխատուժի միգրացիան և վերամիգրացիան մեծ մասամբ սեզոնային են: Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (2009 թ.) և Չոբանյանը (2013 թ.) նկատել են, որ որոշ աշխատողներ տարեկան երկուսից երեք միգրացիոն ուղևորություն են կատարում: Մասնավորապես, ըստ 2015, 2016 և 2017 թթ. Հայ-ռուսական համալսարանի (ՀՌՀ)


իրականացրած հարցումների, այս օրինաչափությունը բնորոշ է գյուղական վայրերից միգրանտներին: Ժամանակավոր աշխատանքային միգրանտների մեծ մասը ցածր որակավորում ունի. ներկայիս և վերադարձած միգրանտների 60 տոկոսը միջնակարգ կամ ցածր կրթություն ունի և մեկնում է Ռուսաստան (92 տոկոս), ուր հայկական սփյուռքի մեծ ցանցեր կան:

Միգրացիայից ստացվող դրամական փոխանցումները կարևոր աջակցություն են տնային տնտեսությունների բարեկեցության և ներքին տնտեսության համար: Համաշխարհային բանկի հաշվարկներով՝ 2018 թ. դրամական փոխանցումները կազմել են 1.87 միլիարդ ԱՄՆ դոլար, ինչը համարժեք է Հայաստանի ՀՆԱ-ի 15.5 տոկոսին¹: Նշված հոսքերին բաժին է ընկնում միգրանտ ունեցող տնային տնտեսությունների եկամտի նշանակալի մասը (35 տոկոսը, գծապատկեր 1): Դրամական փոխանցումներն ապահովում են տնային տնտեսությունների ընթացիկ սպառումը, հիմնականում՝ առաջին անհրաժեշտության ապրանքները և ֆինանսավորումը (գծապատկեր 2): Ավելի լայն ընդգրկմամբ՝ դրամական փոխանցումները նպաստում են համախառն պահանջարկի աճին և, ի վերջո, աղքատության նվազեցմանը (Կարապետյան և Հարությունյան, 2013 թ.), թեև այս ազդեցությունը սահմանափակ է գյուղական և երկրորդային քաղաքների տնային տնտեսություններում

¹ Դրամական փոխանցումների հոսքերը, որոնք նվազել էին Ռուսաստանի տնտեսության թույլ կատարողականի պատճառով, վերականգնման միտում են ցույց տալիս:


Համաշխարհային բանկ, 2017 թ. / World Bank, 2017):

Գծապատկեր 1. Միգրանտներ ունեցող տնային տնտեսությունների եկամտի գրեթե 35 տոկոսը բաժին է ընկնում դրամական փոխանցումներին, տոկոս



Աղբյուրը՝ ՀՌՀ տնային տնտեսությունների միգրացիայի 2015-2017 թթ. հարցումների տվյալներ: Գծապատկերը հիմնված է նշված ժամանակահատվածում տարեցտարի անցկացված երեք հարցումների ի մի բերված ընտրանքի վրա:

Գծապատկեր 2. Դրամական փոխանցումները նպաստում են միգրանտ ունեցող տնային տնտեսությունների ընթացիկ սպառմանը (դրամական փոխանցումների օգտագործումը միգրանտ ունեցող տնային տնտեսություններում), տոկոս



Աղբյուրը՝ ՀՌՀ տնային տնտեսությունների միգրացիայի 2015-2017 թթ. հարցումների տվյալներ: Գծապատկերը հիմնված է նշված ժամանակահատվածում տարեցտարի անցկացված երեք հարցումների ի մի բերված ընտրանքի վրա:

Բայց և այնպես, աշխատաշուկաների վրա դրամական փոխանցումների և միգրացիայի ազդեցության ըմբռնումը լիարժեք չէ: Հարցերից մեկն այն է, թե արդյոք դրամական փոխանցումներն ավելացնո՞ւմ են դրանք ստացող տնային

տնտեսությունների անդամների զբաղվածությունը խթանող աշխատավարձի չափը և ըստ այդմ՝ ապախրախուսում նրանց մասնակցությունն աշխատուժի կազմում: Երկրորդ հարցն այն է, թե ինչ չափով են մարդիկ արտագաղթի ծախսեր կատարում: Հարցումն ընդգրկում է նաև այն հարցը, թե վերադարձողները որքանով են բարեհաջող վերաինտեգրվում Հայաստանի տնտեսությանը, ինչն առանցքային է միգրացիայի ծախսերի համեմատ ավելի բարձր օգուտներ ապահովելու հարցում:

Միգրացիայի շարունակվելու հավանականության պարագայում այս հարցերը դեռևս տեղին են և ժամանակին:

ՀՌՀ հետազոտությունն ու տվյալները ցույց են տալիս, որ առաջին անգամ արտագաղթողների և արտագաղթել ցանկացողների թվերը գրեթե հավասար են: Մեծ հաշվով՝ արտագաղթելու ցանկություն արտահայտողները, որպես կանոն, տնտեսապես ակտիվ՝ 15-39 տարիքային խմբում են և միջինից աղքատ ֆինանսական վիճակում: Արտագաղթելու ցանկությունը հավասարաչափ է բաշխված ըստ սեռերի և կրթական մակարդակի:

Քաղաքականության սույն ամփոփագրի նպատակը միգրացիայի վերաբերյալ երկու հարցերը և Հայաստանի աշխատաշուկայի վրա դրա ազդեցություններին արդրադառնալն է, դրանք քննելը: Ամփոփագրում օգտագործվում են միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների հարցումների տվյալները, որոնք 2015-2017 թթ. ընկած եռամյա ժամանակահատվածում անցկացվել են ՀՌՀ-ի կողմից: Ամփոփագրում նկարագրվում է

Ժամանակավոր աշխատանքային միգրացիայի ընդհանուր պատկերը և ներկայացվում են քաղաքականության վերաբերյալ համապատասխան առաջարկություններ:

2. Ժամանակավոր աշխատանքային միգրացիա

Մարդիկ տեղափոխվում են լավ կյանքի համար: Միգրացիան գլխավորապես պայմանավորված է աշխատանքի ավելի լավ հնարավորությունների և ավելի բարձր աշխատավարձի ցանկությամբ (գծապատկեր 3): Իրոք, ներկա և վերադարձած միգրանտների գրեթե կեսը (48 տոկոս) մինչև Հայաստանից արտագաղթելն աշխատանք չի ունեցել: Կին միգրանտների կողմից բերված պատճառների թվում այնպիսի սոցիալ-տնտեսական գործոններ են, ինչպիսին է «Հայաստանում անառողջ բարոյական մթնոլորտը»: Միգրացիայի վերաբերյալ որոշումների վրա ազդում են նաև տնային տնտեսությունների այնպիսի գործոններ, ինչպիսիք են երեխաների թիվը կամ տնային տնտեսության գլխավորի կրթական մակարդակը (հավելված 2):

Գծապատկեր 3. Հայաստանում աշխատանք գտնելու դժվարությունը և աշխատանքի ցածր վարձատրությունը արտասահման արտագաղթելու օգտին բերվող պատճառներից են




Աղբյուրը՝ ՀՌՀ տնային տնտեսությունների միգրացիայի հարցման տվյալներ, 2015-17 թթ.:

Ծանոթ. Ընտանեկան հանգամանքները վերաբերում են «արտասահմանի բարեկամներին միանալուն», «արտասահմանում ընտանիք կազմելուն» և «ընտանեկան այլ հանգամանքներին»:

Աշխատավարձի ավելացումները միգրացիոն հոսքերը պայմանավորող կարևորագույն գործոն են (Համաշխարհային բանկ, 2018 թ. / World Bank, 2018): ՀՌՀ հարցումներով պարզվել է, որ Հայաստանից արտասահման տեղափոխվող միգրանտներն այնպիսի վայրեր են գնում, ուր առաջարկվող աշխատավարձերն ավելի բարձր են, քան հայրենի երկրում: Գծապատկեր 4-ում ներկայացված տվյալները վկայում են, որ աշխատող միգրանտներն իրապես ավելի շատ են վաստակում նշված ավելի բարձր եկամտով ուղղություններում, քան իրենց գործընկերները հայրենիքում: Նրանց ամսական միջին աշխատավարձը կազմել է 500 դոլար՝ Հայաստանում աշխատող մարդկանց վաստակած 250 դոլարից պակաս գումարի համեմատ: Նման օրինակափոխություն է նկատվում նաև միջնակարգ կրթությամբ կոհորտների և սղամարդկանց կոհորտների աշխատավարձերի համեմատության դեպքում:

Գծապատկեր 4. Միգրանտները վաստակում են ավելի բարձր աշխատավարձ, քան իրենց գործընկերները Հայաստանում




Աղբյուրը՝ ՀՌՀ տնային տնտեսությունների միգրացիայի հարցման տվյալներ, 2015-17 թթ.:

Արտագաղթողների ցանցերը խթանում են միգրացիան՝ ապահովելով տեղեկատվության հասանելիությունը, այդպիսով նպաստելով արտագաղթի ծախսերի նվազեցմանը: ՀՌՀ տնային տնտեսությունների հարցման պատասխանները ցույց են տալիս, որ միգրանտների մեծ մասն ընտանիքի անդամ, բարեկամ կամ ընկեր ունի մեկնման երկրում, որոնք էլ նրանց օգնել են աշխատանք գտնելու հարցում (հարցվածների 32 տոկոսը), ապահովել են բնակարանով (26 տոկոսը) և օգնել են նրանց ուղևորության ծախսերը ֆինանսավորելու հարցում (12 տոկոսը): Միգրանտների ցանցերի առկայությունն ազդում է մեկնման վայրերի ընտրության վրա. վերադարձած միգրանտների կեսը հայտնել է, որ մեկնման վայրն ընտրել է՝ պայմանավորված բարեկամների կամ ընկերների ներկայությամբ:

Ցանցերը, ըստ ամենայնի, աղքատ տնային տնտեսություններին տալիս են աշխատանքային միգրացիայից օգուտ քաղելու հնարավորություն: Միջազգային միգրացիան ծախսատար է: Միջազգային գրականությունից հետևում է, որ ավելի քիչ հավանական է, որ աղքատ տնային տնտեսությունները մասնակցեն աշխատանքային միգրացիային: Սակայն Հայաստանում անցկացված հարցման պատասխաններից հետևում է, որ միգրանտների մեծ մասն այնպիսի տնային տնտեսություններից են, որոնց ֆինանսական վիճակը որոշակիորեն որպես «վատ» է բնութագրվում: Միգրանտների մոտ 30 տոկոսը «շատ վատ» վիճակում գտնվող տնային տնտեսություններից է, 33 տոկոսը՝ «վատ» վիճակում և 35 տոկոսը՝ «միջին» վիճակում գտնվող տնային տնտեսություններից

(գծապատկեր 5): Աշխատուժի միգրացիային աղքատ տնային տնտեսությունների նման համեմատաբար բարձր մասնակցությունը հավանաբար կարելի է վերագրել մեկնման երկրներում, հատկապես՝ Ռուսաստանում, հայկական սփյուռքի ցանցերի առկայությանը, որոնք իջեցնում են արտագաղթի ծախսերը:

Գծապատկեր 5. Միգրանտներից շատերը վատ ֆինանսական վիճակում գտնվող տնային տնտեսություններից են (ներկա և վերադարձած միգրանտների տոկոս)




Աղբյուրը՝ ՀՌՀ տնային տնտեսությունների միգրացիայի հարցման տվյալներ, 2015-17 թթ.:

Կանայք, ըստ ամենայնի, բախվում են միգրացիայի ավելի մեծ արգելքների, քան տղամարդիկ: Աշխատանքային միգրանտների մեծ մասը տղամարդիկ են՝ կազմելով ներկա և վերադարձած միգրանտ բնակչության 81 տոկոսը²: Սա ապշեցուցիչ բարձր տոկոս է, քանի որ տղամարդիկ և կանայք արտագաղթելու գրեթե հավասար ձգտում են արտահայտել

² Չոբանյանը (2013 թ.), վերլուծելով Հայաստանում անցկացված տարբեր հետազոտությունները, պարզել է, որ կանանց մասնաբաժինը վերադարձած միգրանտ բնակչության թվում շատ ավելի փոքր է, քան տղամարդկանցը (13-38 տարեկանների, կախված ընտրանքում ընդգրկված հարցումներից):

(գծապատկեր 6): Աշխատուժի միգրացիայի ցուցանիշում տղամարդկանց գերազանցումը հիմնականում պայմանավորված է կանանց միգրացիայի բացասական ընկալումներով (ԱՄԿ, 2009 թ. / ILO, 2009): Միգրացիայի ցուցանիշում տղամարդանց գերազանցող դիրքը նաև մտավախություններ է առաջացնում՝ կապված Հայաստանում կանանց գլխավորած տնային տնտեսություններն աղքատության նկատմամբ էլ ավելի խոցելի վիճակում թողնելու հետ, քանի որ կանանց շրջանում աշխատաշուկային մասնակցելու ցուցանիշը և աշխատավարձերն ավելի ցածր են (Համաշխարհային բանկ, 2016 թ. / World Bank, 2016):

Գծապատկեր 6. Արտագաղթելու ցանկություն են արտահայտում գրեթե հավասար տոկոսով կանայք և տղամարդիկ (ապագայում արտագաղթելու ցանկություն ունեցող հարցվածների տոկոսը)




Աղբյուրը՝ ՀՌՀ տնային տնտեսությունների միգրացիայի հարցման տվյալներ, 2015-17 թթ.:

Առկա է միգրանտների արտասահմանյան աշխատատեղերի հստակ ոլորտային տարանջատում՝ ըստ կրթության մակարդակի (գծապատկեր 7): Ըստ ՀՌՀ հարցումներում վերադարձողների կոհորտների պատասխանների՝ ցածր որակավորմամբ միգրանտների մեծ մասի աշխատանքը շինարարության ոլորտում է,

որոնց բաժին է ընկնում վերադարձած բնակչության գրեթե 70 տոկոսը, վաստակը՝ ամսական 500 դրլար: Համալսարանական կամ ավելի բարձր կրթությամբ միգրանտները հիմնականում աշխատել են մեկնման երկրների առողջապահության կամ կրթության ոլորտներում:

Գծապատկեր 7. Աշխատատեղերը՝ ընտրված ըստ կրթության մակարդակի (ներկա և վերադարձած միգրանտների ընտրանք)



Աղբյուրը՝ ՀՌՀ տնային տնտեսությունների միգրացիայի հարցման տվյալներ, 2015-17 թթ.:

3. Միգրացիայի ազդեցությունները աշխատուժի կազմում ընդգրկվածության վրա


Դժվար է որոշել դրամական փոխանցումների և միգրացիայի զուտ ազդեցությունը աշխատուժի առաջարկի վրա, քանի որ փոխարինման և եկամտային ազդեցությունները հակառակ ուղղություններով են գործում: Աշխատող բնակչության արտահոսքերն ուղղակիորեն կրճատում են աշխատուժի չափը և աշխատավարձերը մղում վեր: Հետևանքը մարդկանց կողմից աշխատանքի ժամերի ավելացումն է և ազատ ժամանակի կրճատումը: Մյուս կողմից՝ դրամական փոխանցումները, որպես անաշխատ եկամտի լրացուցիչ աղբյուր, ավելացնում

են աշխատողների համար ընդունելի աշխատավարձի չափը, որի դիմաց շահագրգռված են աշխատել, և պակասեցնում է դրամական փոխանցում ստացող ընտանիքների զբաղվածության հավանականությունը: Եկամտի վրա նման ազդեցություն է նկատվել Ճամայկայում³, Էլ Սավադորում⁴ և Լատինական Ամերիկայի մյուս երկրներում⁵: Ամփոփելով՝ միգրացիայի և դրամական փոխանցումների գուտ ազդեցությունը աշխատուժի առաջարկի վրա միանշանակ չէ:

Հայաստանում աշխատաշուկայի կազմում ընդգրկվածությունը և ակտիվության բացակայությունը, ըստ ամենայնի, բավականին անզգայունակ են տնային տնտեսության արտագաղթող ունենալու կամ չունենալու հանգամանքի նկատմամբ (գծապատկեր 8): Միգրանտ ունեցող տնային տնտեսություններին բաժին է ընկնում աշխատուժի կազմում չընդգրկված աշխատունակ տարիքի չափահասների 34 տոկոսը: Միգրանտ չունեցող տնային տնտեսություններին նմանատիպ տեսակարար կշիռ է բաժին ընկնում՝ 31 տոկոս: Համապատասխանաբար, նմանատիպ են նաև աշխատունակ տարիքի չափահաս զբաղված բնակչության մասնաբաժինները (46 տոկոս միգրանտներ ունեցող տնային տնտեսությունների և 48 տոկոս առանց միգրանտների տնային տնտեսությունների դեպքում):

Գծապատկեր 8. Աշխատուժի առաջարկում միգրանտներ ունեցող կամ չունեցող տնային տնտեսություններին բաժին է ընկնում նմանատիպ տեսակարար կշիռ (տոկոս)

³ Բուսսոլո և Մեդվեդև (2007 թ.) և Քիմ (2007 թ.) Bussolo and Medvedev (2007) and Kim (2007)
⁴ Acosta (2006).
⁵ Acosta, Fajnzylber and Lopez (2008).



Աղբյուրը՝ ՀՌՀ տնային տնտեսությունների միգրացիայի հարցման տվյալներ, 2015-17 թթ.:

Սակայն տնային տնտեսությունում միգրանտ անդամ ունենալը կարող է ավելացնել աշխատուժի կազմում ընդգրկվածության հավանականությունը տնային տնտեսության մյուս գործոնները զսպելու դեպքում: Ինչպես 1-ին աղյուսակը ցույց է տալիս, աշխատելու հավանականությունը դրական և վիճակագրորեն էական է միգրանտներ ունեցող տնային տնտեսությունների պարագայում⁶: Դրա հնարավոր պատճառներից մեկն այն է, որ նշված տնային տնտեսությունների այլ պատճառներով չաշխատող անդամներն արդեն արտագաղթել են արտասահման: Մյուս հնարավոր բացատրությունն այն է, որ դրամական փոխանցումները մեղմում են միգրանտներ ունեցող տնային տնտեսությունների ֆինանսավորման սահմանափակումները և հետևաբար խթանում նրանց տնտեսական գործունեությունը, ինչպես նկատվել է

⁶ Աշխատելու հավանականության տեսանկյունից կարևորվող մյուս գործոններն են տնային տնտեսության զլխավորի կրթությունը (դրական), տնային տնտեսությունում երեխաների թիվը (դրական) և տնային տնտեսությունում տարեցների թիվը (բացասական):

Ֆիլիպինների դեպքում (Համաշխարհային բանկ, 2013 թ. / World Bank, 2013): Ավելին, արական սեռի միգրանտների արտահոսքը կիսթանի աշխատուժի կազմում կանանց մասնակցությունը: Դրդատանում տնային տնտեսության անդամի արտագաղթը մեծացնում է տնային տնտեսության կին անդամների՝ ընտանիքում չվարձատրվող աշխատանքի ընտրությունը և ավելին, այդ չմեկնած կանանց մեծ մասն իր մասնագիտությամբ աշխատելուն ավելի երկար ժամեր է հատկացնում (Կարիմշակով և Սուլայմանովա, 2017 թ.):

Աղյուսակ 1. Ավելի հավանական է, որ տնային տնտեսության կազմում միգրանտի առկայությունն ավելացնի տնային տնտեսության ընդգրկվածությունն աշխատուժի կազմում

Variables	Labor force participation rate
HH with migrants	0.0653*** (0.0190)
HH Head education	
Basic school	0.108 (0.141)
General secondary	0.200 (0.134)
Pre-vocational	0.255 (0.194)
Vocational (college)	0.209 (0.133)
Higher education	0.285** (0.133)
Number of children	0.0433*** (0.00987)
Number of elderly	-0.0449*** (0.0137)
Number of observations	1,606
Notes: Standard errors in parentheses *** p<0.01, ** p<0.05, * p<0.1	

Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկը ՀՌՀ տնային տնտեսությունների միգրացիայի 2015-2017 թթ. հարցումների տվյալների հիման վրա:

4. Միգրացիայի ծախսերը

Աշխատուժի միգրացիայի շրջափուլի ընթացքում աշխատողները կատարում են ինչպես դրամական, այնպես է ոչ դրամական ծախսեր: Դրամական ամենաառաջին ծախսերը՝ այսպես կոչված աշխատանքի ներգրավման ծախսերը,

առաջանում են զբաղվածության գործընթացն աշխատողների կողմից սկսվելու պահից: Աշխատանքի ներգրավման ծախսերը կարելի է խմբավորել երեք խոշոր խմբերում. (i) ընդունող և ուղարկող երկրների օրենքների և կարգերի պահանջների կատարման ծախսերը, օրինակ՝ աշխատանքի թույլտվությունների ձեռքբերումը կամ բուժզննումները, (ii) աշխատողների ներգրավման գործակալություններին կամ գործակալներին աշխատատեղի մասին տեղեկությունների, հայտերի և աշխատանքի տեղավորման ընթացակարգերի համար տրվող վճարները և (iii) ներքին և միջազգային փոխադրման ծախսերը: Միգրացիայի ոչ դրամական ծախսերը պայմանավորված են հմտությունների, մշակութային, լեզվական և կրոնական տարբերություններով (Յի, 2016 թ. / Yi, 2016):

ՀՌՀ հարցման տվյալների համախումբը միգրացիայի դրամական ծախսերը որոշելու հնարավորություն տվող տեղեկություններ չի պարունակում: Սակայն քաղաքականության սույն ամփոփագրում օգտագործվում են հարցման տվյալների համախումբում վերադարձած միգրանտների (վերադարձած հարցվածներ) որակական պատասխանները՝ միգրացիայի ծախսերի ցուցիչը ստանալու համար (հավելված 3-ում ներկայացվում է մեթոդաբանությունը): Ցուցիչները տատանվում են 0-ից 1-ի միջակայքում: Ծախսային ցուցիչի դեպքում 0-ն ամենանվազ ծախսատարն է, 0.5-ը՝ չափավոր ծախսատարը և 1-ը՝ ամենաձախսատարը: Օգտավետության

ցուցիչն ընդգրկում է հմտությունների կամ ֆինանսական վիճակի բարելավման օգուտները. 0-ն ենթադրում է հմտությունների կամ ֆինանսական վիճակի վատթարացում, 0.5-ը՝ փոփոխությունների բացակայություն կամ աննշան փոփոխություններ և 1-ը՝ էական բարելավում: Նշված մեթոդը նման է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)՝ ծառայությունների առևտրի սահմանափակման ցուցիչի մշակման համար օգտագործած մեթոդաբանությանը:

Ցուցիչը ներառում է չորս տարբեր ծախսային բաղադրիչներ: Առաջինը վերաբերում է մեկնումից առաջ աշխատանքի համար պայմանավորվածություն չունենալու հետևանքով կրած ծախսերին, ընդ որում, 0-ն նշանակում է աշխատանքային գրավոր պայմանագրի առկայություն և լիարժեք կատարում, 0.5-ը՝ աշխատատեղի խոստում և 1-ը՝ աշխատատեղի շուրջ պայմանավորվածության բացակայություն: Երկրորդ բաղադրիչը վերաբերում է աշխատուժի պաշտպանվածության առումով խախտումների ենթարկվելուն: Երրորդը կապված է միգրանտի որակավորման կամ կրթական մակարդակից ցածր աշխատատեղերի ծախսերին: Չորրորդ բաղադրիչը կապված է վերադարձից հետո հայաստանյան հասարակությանը վերստին հարմարվելու դժվարությունների հետ:

Միջին հաշվով աշխատուժի միգրացիան մասամբ է ծախսատար, որ ըստ ցուցիչի՝ կազմում է 0.5 (գծապատկեր 9): Նախքան միգրացիան գրավոր պայմանագիր կամ աշխատանքի պայմանավորվածություն չունենալու գինը, որպես կանոն, բարձր է:

Այն զգալի է, քանի որ վերադարձող հարցվածների կեսից ավելին հայտնել է, որ մեկնել է տվյալ ուղղությամբ աշխատանքի խոստումների դիմաց (շուրջ 60 տոկոս) կամ առանց նախապես աշխատանքի պայմանավորվածություն ունենալու (30 տոկոս): Մյուս կողմից՝ աշխատուժի թույլ պաշտպանվածության հետևանքով կրած ծախսերը (ինչպիսիք են, օրինակ, վճարման ուշացումները, արտաժամյա աշխատանքի դիմաց չվճարելը և առողջության ապահովագրության բացակայությունը), որպես կանոն, չափավոր են: Կին միգրանտները սովորաբար փոքր-ինչ ավելի բարձր միգրացիոն ծախսեր են կրում, քան նրանց տղամարդ գործընկերները, հիմնականում պայմանավորված առանց արտասահմանյան աշխատանքի համար պայմանագիր ունենալու մեկնելու հետ: Տարրական կրթությամբ կոեորտի կրած միգրացիոն ծախսերը նվազագույն են, իսկ բարձրագույն կրթությամբ իւմբի համար ամենաբարձր՝ հմտությունների անհամապատասխանության պատճառով:


Հմտությունների անհամապատասխանության ծախսերը, ըստ ամենայնի, ավելի մեծ են միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթությամբ միգրանտների համար: Ընդհանուր առմամբ, հմտությունների անհամապատասխանության ծախսերը չափավոր են, թեև լայնորեն սփռված: Վերադարձած հարցվածների գրեթե 50 տոկոսն ասել է, որ իր զբաղեցրած աշխատատեղերը որոշակի առումով համարում է իր որակավորմանը համապատասխանող: Սակայն այս առումով փորձը զգալիորեն տարբերվում է՝ ըստ միգրանտի կրթական մակարդակի: Միջին մասնագիտական կամ համալսարանական կրթությամբ

վերադարձողների գրեթե 80 տոկոսը հայտնել է, որ աշխատանքը չի համապատասխանել իր որակավորմանը՝ համեմատած միջնակարգ կամ ավելի ցածր կրթությամբ հարցվածների հետ:

Վերաինտեգրման ժամանակ կրած ցածր ծախսերը կարելի է բացատրել աշխատուժի ժամանակավոր միգրացիայի կարճաժամկետ բնույթով:

Վերադարձած հարցվածների գրեթե 75 տոկոսը հայտնել է, որ վերադարձից հետո կրկին հարմարվելու դժվարությունների չի հանդիպել: Վերադարձած հարցվածների կեսը վերադարձից հետո աշխատանք է ունեցել: Հիմնական դժվարությունը, որի մասին հայտնել են կրկին հարմարվելու հարցում դժվարություն ունեցածները, «աշխատանքային խնդիրներն»⁷ են: Դա ընդհանուր առմամբ համապատասխանում է էմպիրիկ ուսումնասիրությունների այն եզրահանգումներին, որ ցածր որակավորմամբ միգրանտները տուն (օրինակ՝ Տաջիկստան) վերադառնալիս բախվում են աշխատանք գտնելու դժվարությունների:

Գծապատկեր 9. Միգրացիայի ծախսի ինդեքսը՝ միջին ծախսը և ծախսը՝ ըստ բաղադրիչների (2015-2017 թթ.)




Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները ՀՌՀ տնային տնտեսությունների միգրացիայի 2015-2017 թթ. հարցումների տվյալների հիման վրա:

Միգրացիայի օգուտները կարող են բարելավվել հմտությունների ավելի լավ համապատասխանեցման և վերաինտեգրման միջոցով:

Միգրացիայի օգուտները միջին հաշվով որոշակիորեն ցածր են (0.2-ից պակաս), ինչպես ցույց է տրվում 10-րդ գծապատկերում: Ըստ ամենայնի, միջնակարգ կամ ցածր կրթությամբ վերադարձողների կեսից ավելին կարծում է, որ արտասահմանում իրենց փորձը որոշ չափով կատարելագործել է իրենց հմտությունները, իսկ միջին մասնագիտական կամ համալսարանական կրթությամբ հարցվածների 40 տոկոսից ավելին կարծում է, որ իրենց փորձը մրցակցային առավելություն չի տվել Հայաստանի աշխատուժի շուկայում: Վերադարձած հարցվածների կեսն ասել է, որ վերադարձից հետո իրենց ֆինանսական վիճակի բարելավում չի նկատել, և դա կարող է հանգեցնել նրանց կրկին արտագաղթին:

Գծապատկեր 10. Միգրացիայի օգտավետության ցուցիչը՝ միջին ծախս և ծախսը՝ ըստ բաղադրիչների (2015-17 թթ.)

⁷ Հարցումներում «աշխատանքային խնդիրները» լրացուցիչ չեն սահմանվում:



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները ՀՌՀ տնային տնտեսությունների միգրացիայի 2015-2017 թթ. հարցումների տվյալների հիման վրա:

5. Առաջարկություններ քաղաքականության վերաբերյալ

Չնայած աշխատուժի միգրացիայի օգուտներին՝ միգրացիայի մարտահրավերները պահպանվում են:

Մարտահրավեր 1. Ուղեկցվելով աշխատունակ տարիքի բնակչության կրճատմամբ և վերադարձողների նվազմամբ՝ աշխատողների արտագաղթն ընդհանուր առմամբ փոքրացնում է աշխատուժի չափը:

Քաղաքականության պատասխան գործողություններ: Նախ՝ առավելագույնս օգտագործել սփյուռքի միջոցները արտադրողականությունը բարձրացնելու, համար, օրինակ՝ սփյուռքին խթանների տրամադրումը հմտությունների, գիտելիքի և «նոու-հաուի» փոխանցման համար, և երկրորդ՝ խթանել շրջանաձև միգրացիան հմտությունների ձևավորման համար, օրինակ՝ ընդունող երկրների հետ համատեղ գործընկերությամբ՝ աշխատանքի վայրում ուսուցում ապահովելու համար:

Մարտահրավեր 2. Ռուսաստանից բարձր կախվածությունը ռիսկային է: Միգրանտների աշխատատեղերը և եկամուտները խոցելի են Ռուսաստանի տնտեսական պայմաններում, ինչպես նկատվել է վերջին տարիներին՝ տնտեսական անկումների ժամանակ, որոնք առաջացել են նավթի ցածր գների պահպանման հետևանքով:

Քաղաքականության պատասխան գործողություններ: Արտասահմանյան հնարավորությունների ընդլայնում՝ աշխատանքային երկկողմ պայմանավորվածությունների և առանձին մասնագիտություններ թիրախավորող գործընկերությունների ձեռքբերմամբ: Դրանք Հայաստանին կարող են օգնել ավելի երկարաժամկետ կտրվածքով մրցունակության ձևավորման հարցում, ինչպես դիտվել է Ֆիլիպիններում, որը ֆիլիպինցի որակավորված բուժքույրերի շնորհիվ ձեռք է բերել միջազգային համբավ:

Մարտահրավեր 3. Միգրանտները մեկնում են առանց գրավոր պայմանագրերի, ինչն ավելացնում է միգրացիայի ծախսը:

Քաղաքականության պատասխան գործողություններ: Զբաղվածության պետական գործակալությանն օժտել սփյուռքի համայնքների, առևտրի պալատների և դեսպանատների հետ ցանցեր ստեղծելու հնարավորությամբ՝ մեկնման երկրներում պահանջարկի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու և աշխատատեղերի հանրային հարթակներում դրանք հրապարակելու համար:

Մարտահրավեր 4. Միգրանտներն իրենց հմտությունների կորուստ են ունենում:

Քաղաքականության պատասխան գործողություններ: Աշխատուժ ընդունող երկրների հետ գործընկերության մեխանիզմի մշակում Հայաստանում հմտություններ ձեռք բերած աշխատողների վերապատրաստման համար: Օրինակ՝ ուկրաինացի բուժքույրերը կամ բժիշկները կարող են ձեռք բերել Լեհաստանում ինամք տրամադրողի որակավորում, և ֆիլիպինցի կամ ինդոնեզացի բուժքույրերը կարող են վերապատրաստվել Ճապոնիայում ինամք տրամադրող դառնալու համար: Քաղաքականության պատասխան հետագա գործողությունները կլինեն որակավորումների և հմտությունների չափանիշների ներդաշնակեցումը, ուսուցման համար համատեղ ուսումնական ծրագրի մշակումը, աշխատանքի վայրում վերապատրաստման ապահովումը՝ պահանջարկ վայելող աշխատատեղերին համապատասխան և ուսումնական կենտրոններում աշխատակիցների կարողությունների ստեղծումը:

Մարտահրավեր 5. Վերադարձողները հանդիպում են աշխատանք գտնելու դժվարությունների:


Քաղաքականության պատասխան գործողություններ: Ընդունող երկրների հետ աշխատանք վերադարձողների վերաինտեգրմանն աջակցելու համար, օրինակ՝ վերադարձողների՝ արտասահմանում աշխատելիս ունեցած ձգտումներին համապատասխան վերապատրաստում ապահովելով (ինչպես դիտվել է Կորեայի աշխատանքի թույլտվության համակարգում, ցածր որակավորմամբ աշխատուժի միգրացիայի համակարգ) և մշակելով

վերապատրաստման դասընթացներ, որոնք վերադարձողներին տալիս են արտասահմանում ձեռք բերած հմտություններն օգտագործելու հնարավորություն:

Օգտագործված գրականություն


- Acosta, P. 2006. Labor supply, school attendance, and remittances from international migration: The case of El Salvador. *World Bank Policy Research Working Paper* 3903.
- Acosta, P., P. Fajnzylber, and J. H. López. 2008. Remittances and Household Behavior: Evidence for Latin America. In: *Remittances and Development*, Fajnzylber, Pablo and Humberto Lopez, eds., The World Bank.
- Bussolo, M., and D. Medvedev. 2007. Do remittances have a flip side? A general equilibrium analysis of remittances, labor supply responses, and policy options for Jamaica. *Policy Research Working Paper Series* 4143, The World Bank.
- Chobanyan, H. 2013. Return Migration and Reintegration Issues: Armenia. *CARIM-East - Consortium for Applied Research on International Migration*.
- International Labour Organization (ILO). 2009. Migration and Development: Armenia Country Study. *ILO Subregional Office for Eastern Europe and Central Asia*.
- Karapetyan, L. and Liana Harutyunyan. 2013. The Development and the Side Effects of Remittances in CIS Countries: the Case of Armenia. *CARIM-East - Consortium for Applied Research on International Migration. Research Report 2013/24*.
- Karymshakov, K and Burulcha Sulaimanova. 2017. Migration impact on left-behind women's labour participation and time-use Evidence from Kyrgyzstan. *WIDER Working Paper 2017/119*, UNU.
- Kim, N. 2007. The Impact of Remittances on Labor Supply: The Case of Jamaica. *World Bank Policy Research Working Paper 4120*, The World Bank.
- World Bank. 2013. Republic of the Philippines: The Impact of Migration and Remittances on Competitiveness through the Labor Market.
- World Bank. 2016. Armenia Country Gender Assessment. *Poverty and Equity Global Practice*.
- World Bank. 2017. *Future Armenia: Connect, Compete, Prosper*. A Systematic Country Diagnostic, World Bank.
- World Bank. 2018. Moving for Prosperity: Global Migration and Labor Markets. *Policy Research Report*.
- Yi, S. 2016. High migration costs for low-skilled migrants. *Mimeo, prepared for the OECD*.

Հավելված 1. Հայերի բաշխվածությունն արտասահմանում (թիվը)



Աղբյուր. ՄԱԿ-ի Գլոբալ միգրացիայի շտեմարան, “Միջազգային միգրանտների թիվը. 2017թ.ի թարմացված տվյալներ”:

Հավելված 2. Միգրացիայի որոշիչ գործոնները (պրոբիտ ռեգրեսիայից ստացված սահմանային ազդեցությունը)



Հավելված 3. Միգրացիայի «ծախս/օգուտ» ցուցիչի մշակման մեթոդաբանությունը

Մույն հավելվածում ներկայացվում է միգրացիայի «ծախս/օգուտ» ցուցիչների հաշվարկի գնահատման մեթոդաբանությունը դեպի Ռուսաստան հայաստանցիների ժամանակավոր աշխատանքային միգրացիայի համար: Դրանով ընտրվում են 2015-2017 թթ. ընթացքում ՀՌՀ կողմից անցկացված միգրացիայի հարցումների համապատասխան փոփոխականները: Դրանք բաղադրյալ ցուցիչներ են, որոնք արտացոլում են թե՛ միգրացիայի ծախսերը, թե՛ օգուտները: Դրանցով տրվում է 0 –ից 1 թվային արժեք, որտեղ 0-ն համապատասխանում է միգրացիայի ցածր (ցածր) ծախսին (օգուտին), 0.5-ը՝ չափավոր ծախսին (օգուտին) և 1-ը՝ բարձր (բարձր) միգրացիոն ծախսին (օգուտին): Թվային արժեքները տրվում են ՀՌՀ հարցումների յուրաքանչյուր դիտարկմանը (այն է՝ վերադարձած յուրաքանչյուր հարցվածին): Ա.3.1 աղյուսակում ներկայացվում են հարցմամբ ստացված համապատասխան փոփոխականները և թե ինչ եղանակով է միավորային գնահատականը տրվում հարցվածներից յուրաքանչյուրին:

Աղյուսակ Ա.3.1. Միգրացիայի ծախսերի և օգուտների գնահատումը միգրացիայի ծախսի ցուցիչների ստացման համար

Տեսակ	Ցուցանիշ	Հարցման համապատասխան հարցադրում	Պատասխանին տրված թվային արժեք		
			0	0.5	1
Միգրացիոն ծախսեր	Մուտքի արգելք	4.15. Ունեցե՞լ էք աշխատանքի նախնական պայմանավորվածություն կամ խոստում:	Այո, գրավոր պայմանագիր	Այո, խոստում կամ Այո, այլ	Ոչ
	Աշխատանքի պայմանավորվածություն	4.17 Որքանո՞վ է այն կատարվել:	Ամբողջությամբ կամ հիմնականում	Մասնակի	Չի կատարվել
	Սոցիալական պաշտպանությունը արտասահմանյան աշխատանքի ընթացքում Սոցիալական պաշտպանություն	4.12. Այդ երկրում առողջապահական ապահովագրություն ունեցե՞լ էք:	Այո, մշտական ապահովագրություն	Այո, ժամանակավոր ապահովագրություն	Ոչ
		4.13. Ինչպիսի՞ն էր Ձեր առողջությունը մեկնելուց հետո և վերադարձի ժամանակ:	Մեկնումից առաջ վատ, վերադառնալիս՝ հիանալի	Նույնը կամ որոշ չափով վատ, քան մինչ մեկնումը	Հիանալի մինչ մեկնելը, սակայն վերադառնալիս վատ
	Աշխատանքի համապատասխանեցման ծախսը	4.26. Աշխատանքը Ձեր մասնագիտությանը համապատասխանո՞ւմ էր :	Այո, ամբողջությամբ	Ավելի շուտ այո կամ ավելի շուտ ոչ	Ոչ
		4.27. Աշխատանքը Ձեր որակավորմանը համապատասխանո՞ւմ էր:	Այո, ամբողջությամբ	Ավելի շուտ այո կամ ավելի շուտ ոչ	Ոչ

	Աշխատուժի պաշտպանություն	4.22. Աշխատանքային գրավոր պայմանագիր ունեցել էք:	Այո	Առկա չէ	Ոչ	
		4.30. Ձեր աշխատանքի հետ կապված ի՞նչ խնդիրներ եք ունեցել:	Բինար գնահատում			
		4.30-1. Չվճարված արտաժամյա աշխատանք	Ոչ		Այո	
		4.30-2. Աշխատանքային ծանր պայմաններ	Ոչ		Այո	
		4.30-3. Աշխատանքի անցանկալի պարտավորություններ	Ոչ		Այո	
		4.30-4. Աշխատավարձի ուշացումներ /մասնակի կամ ոչ ամբողջական վճարված	Ոչ		Այո	
	Մարդու իրավունքների պաշտպանություն	4.31 Աշխատանքի ընթացքում՝ մարդու իրավունքների խախտումների կամ հարկադրանքի նման տեսակների ենթարկվել էք:	Բինար գնահատում			
		4.31-1. Պարտքային կախվածություն	Ոչ		Այո	
		4.31-2. Անվտանգության պահպանման կանոնների խախտում	Ոչ		Այո	
		4.31-3. Տեղաշարժման սահմանափակում	Ոչ		Այո	
4.31-4. Փաստաթղթերի առգրավում		Ոչ		Այո		
4.31-5. Ֆիզիկական/ սեռական բռնություն		Ոչ		Այո		
4.31-6. Քրեական գործունեությանը ներգրավվածություն		Ոչ		Այո		
4.31-7. Իշխանությունների հանձնելու սպառնալիք		Ոչ		Այո		
Վերահսկողություն	4.46. Վերադարձից հետո կրկին հարմարվելու դժվարություններ ունեցել էք կամ ունե՞ք:	Ոչ	Այո, որոշ չափով կամ իրականում ոչ	Այո		
Միգրացիայից օգուտներ	Հմտությունների բարելավում	4.38. Որքանո՞վ են արտասահմանում Ձեր մասնագիտական գիտելիքներն ու հմտություններն ավելացել:	Չեն ավելացել	Որոշ չափով	Էականորեն	
		4.39. Ընդհանուր առմամբ ուղևորությունը նպաստել է Հայաստանի	Ոչ	Որոշ չափով կամ իրականում ոչ	Այո	

		աշխատաշուկայում Ձեր ավելի մրցունակ դառնալուն:			
	Ֆինանսական վիճակ	4.45. Ինչպե՞ս է Ձեր ֆինանսական վիճակը փոխվել վերադառնալուց հետո:	Վատթարացել է	Բարելավվել է կամ չի փոխվել	Էականորեն բարելավվել է